12. ՄՈՐԸ ԿՈՌՆԸ

Մըհետե ինիս ա, չինիս մին քյասիբ մարթ։

Ըզետ շատ տիժար ա ինիս ըպրես։ Ըտրան միչև քսանըհենգյ արեկանը խոխա չի ինիս։

Ախրը քսանըվեց տրեկանըմը ըտրա կնեգյը ճոխտակ խոխա յա պիրիս, մինը՝ ջանլու, էն մինը՝ մաշված։ Կնեգյը, վեր խոխան պիրիս ա, տասնիրեք օր կնաս ա, մռնես։

Մարթը շատ ա տխրվես, քյիս ա ուրանց շենան մոտիկ մին խորթ կնեգյ պիրիս։

Էտ կնեգյը խոխոցը նհետ բըրըշիս չի։ Հարը, վեր տսնաս ա պենին թահրը իտի յա, շատ ա մտածես, թա խոխեքյը հո՞ւնց կանեն։ Էտ հալա վեր իտի յա, ետնան հի՞նչ կինի։

Քյիս ա հընգյիստարան, ուրան մըեռած կնգանը կոռնը թաքուն կտրես, մին մեծ փլասըմ փթթես, կըրես, պիրիս։

Ըտրանա ետը, կնգանը ըսես ա.— Վեր խոխոցը թակիս, համին էս փլասավը կթակիս։

Էտ կնեգյըտ հինչքան խոխոցը թրկես ա, ընդրանք էնքան արդամ ըն ընես։

Մին օր մարթան թաքուն էտ կնեգյը շորը յոր ա ունես, տնես տուս, պինաս, տսնաս մին կտրած կոռնը։

Բիրդան մաննը կծես ա։ Ըտրանա ետը, միշտ ուրան ծեռքավն ա թկես։ Խոխերքը վեր տսնաս ըն շատ ա ուրանց ղընամիշ ընես, փխչիս ըն։

Քյիս ըն, քյիս, քյիս ըն մին մթեն ծմակ ընգնես։ Տրսնաս ըն հեն ա մին հրեռե տեղ մին պեն իշեղ-իշեղ ընես։ Ըտրա բուրջը յոր ըն ունես քյիս։

Քյիս ըն, քյիս, տսնաս մին բաբաթ կրակ ա, ընդրա կոխկեն մարթ չիկա։ Կրակեն կոխկեն նստես ըն։ Հաՙրը մին էրկու ճաՙթ տված ա ինիս, մինը թքցնիս ըն, հոռ ընես։ Մինն էլ, վեր ուզիս ըն, թա թըքցընեն, տրսնաս ըն հեն ա մին լխլխկոց ա կյաս։

Եշիս ըն, տրսնաս հեն ա մին ղուրուլթու յա տոՙւս կյաս։

Եշիս ըն տրսնաս մին մրեծ պեն ա, ամմա աշկերը փլստրատեն ա տաս։

Վեր մուտընաս ա, տսնաս ըն վեր օշափ ա։

Օշափ, հի՞նչ օշափ, մին զրեռ, մին սար։ Օշափը վեր մուտընաս ա, աշկերը չռես, խոխերքը հրլվիս ըն։ Մուտընաս ա էլհա ետ քշվիս, ետնան քյիս էրկու եղնը կես ընիս, պիրիս ըտեղ վեր տինիս։

Ըսես ա.— Յրկե քշերեն մին քյրսիբի տոՙն ըմ քՙանդՙալ։ Հետը պահալ ըմ, վեր եզները տոՙւս ա ըրալ, քյեցալ ըմ, փխցրալ պերալ ճըրղոտալ։ Մհենգյ, թՙա կարիքյ ինձ նրհետ բաշա-բաշ օտիքյ, ծրեզ սաղ-սալամաթ թող ըմ ընական, ըշտեղ օղում ըք, քյեցեքյ, թՙա օտիքյ վեչ, ծրեզ բդի օտիմ։

Էս խխոցը մինը քյոՙւհի յա ինիս, ըսես ա.— Օտիլ բիգիմ։

Բուդեն նեստա յա կնաս, կրես չի մՙասրՙափ անց կըցընե։ Էս մինը, վեր բուղերը յոր ա ունես, թա օտե, թաքուն կլխավը թող ա ընես, քցես դալդան։ Օշափը, վեր տսնաս ա պենին թՙուհրը հինչումն ա, ժուլիգյին թՙուլ ա ընես։ Քյոՙւհՙուն յոր ունես, քշտեն պհես, վեր քյոՙւքՙուցնե, ետնան օտե։ Ժուլիգյը քյիս ա կյողը կնաս։ Էն մինն էլ խիլլի վախտ կնաս ա, գյիրավան քցես, ճղես։ Քյիս ըն, քյիս, քյիս տսնաս հղենի ավերակ տներ, շինոթունի։

Կյաս ըն, կյաս մին վանք ա պտհես, նի յըն մննես մաչը, տսնաս պատեն մաչան մինն ըսես ա. — Վրեղու ծնունդնի՞, թըքըվերեն ըխճկերքը կորեն, քյեցեն։ Խե՞ տՙուրՙուր չըք կյաս։

Տղերքյը մնաս ըն մաթ մնացած։ Վխելնան նրհետ տՙուս ըն կյաս, տսնաս էրկու ղՙաշՙանգյ ախճիգյ, վեր լՙհՙա ըրեքյնակեն ըսես ըն. — Տեն կաց, մունք ընք լՙուս տաս։

Ըտրանք վազ ըն տաս ըտրանց հետան, վեր փռնին։ Միչև հրսնելը ըխճկերանցը մինը հրլիս ա, պրզես, ըրվաս չի՞, ըսես ա՝ «Վեչ ըլՙալ ըմ, վեչ էլ կինիմ»։ Տղերքյը քյիս ըն տսնաս, հեն ա էն մինը ծվծվաս։

Տղերքանը մինը ըսես ա.—Ա՛ քուր, պա հինչ ա՞ պտահալ, հի՞նչ չի պտահալ։

Ըսես ա.— Դե իմ քուր ընգա՛լ ա վերը։

Էտ վախտտ տըսնաս ա մին օխծ, ամմա վեր օխծ ասիմ մեիկ ա։ Մին կյերան, համ հըկըհակու ընելավ, համ փշրցնելավ կյաս ա, նի մննես վերը։ Էտ ախճիգյըտ առռե մնաս ա ցմաքված։ Փոխըփեշ-մա՛ն ետ ա տռնաս դիրի ուրա՛նց տոն, հորն էլ ըսես չի։ Էտ տըղերքյը քյիս ըն թաքավերեն պալատը ճըրես, նի մննես։

Էտ տըղորցը մինը ըսես ա.— Թաքավերն ապրած կենա, հի՞նչ կտաս ախճիգյըտ ճարիմ։

Թաքավերն ըսես ա.— Թաքավերոթունես կեսը քյըեզ կտամ։

Էտ տղան քյիս ա մին էրկան քյա՛նդիր ինքյ ունես, կյաս վերեն կլո՛խը, հանցու վեր օխծը տունս կյա, ինքյը նի մըննե, ըխճկանը ըզադե։ Ամմա վխես ա, նի չի մըննես։ Էս մին ախպերը քյա՛նդիրը պորտան կպես ա, նի մննես, ըխճկանը նեստա կպես, էտ վերին քշտի վըխլըկոտ ախպերը տունս ա պիրիս։ Ամմա ուրա՛ն ախպորը տունս չի ունես, վերըմըն ա թուղես։ Թաքավերը մոլհա՛թ ա ընես, վեր ըխճկանը տա ըտրան։

Ախճիգյը թաքոն կնչես ա ուրա՛ն ծըռոտանցը, վեր քյինին էն տղեն վերան տունս օնին։ Գյա՛գեքյը քյիս ըն տունս ունես, պիրիս։ Թաքավերեն ախճիգյը ընգրան նհետ փսըկվես ա։

Ընդրանա ետը փիս ախպորը դիվանը ընես ըն, ուրա՛նք էլ լա՛վ ըպրես։ Ժողովուրթը ըսես ա. «Լա՛վ թունը վեր կյետն էլ քցիս, վորչել չի»։